«Նոնա-Նոռա» ՍՊԸ-ի գույքի կրկնաճուրդի կազմակերպման և անցկացման մասին

2026-11-16 11:48:44

Հայտատու	Ֆիզիկական անձինք
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված

10.11.2026թ. հայտարարված «Նոնա-Նոռա» ՍՊԸ -ին պատկանող գույքերի աճուրդը կայացել է մասնակի,վաճառվել է թիվ 6, 12, 17 և 18 լոտերը։
04.12.2026թ. ժամը 13։00-ին «Նոնա-Նոռա» ՍՊԸ-ի՝ ԿԴ1/0083/04/16 սնանկության գործ/ սնանկության գործով կառավարիչ Գ.Ավագյանի կողմից ք. Երևան, Դավթաշեն, Տիգրան Պետրոսյան 21 հասցեում կանցկացվի ընկերությանը պատկանող գույքերի կրկնաճուրդը։
Կրկնաճուրդի ներկայացվող գույքերի արժեքները նվազեցված չեն նախորդ աճուրդի մեկնարկային գներից և համապատասխանաբար կազմում են՝
Լոտ 15. GAZ 322132-418 մակնիշի 713 LO 43 համարանիշի, 2009թ. արտադրության ավտոմեքենա, նույնականացման համար X9632213290630538- 54 480 ՀՀ դրամ,
Լոտ 16. GAZ 322132-418 մակնիշի 701 LO 43 համարանիշի, 2009թ. արտադրության ավտոմեքենա, նույնականացման համար X96322139492 – 24 600 ՀՀ դրամ,
Լոտ 22. GAZ 322132-418 մակնիշի 642 LO 43 համարանիշի, 2009թ. արտադրության ավտոմեքենա, նույնականացման համար X9632213290639163 – 91 700 ՀՀ դրամ։
Աճուրդի ներկայացվող ավտոմեքենաները գտնվում են ք.Երևան Դավթաշեն 3-րդ թաղամաս, ¦Դավիթ Հոլդինգ§ ՓԲԸ-ի տարածքում, ապակոմպլեկտավորված վիճակում, ենթակա չեն շահագործման և վերանորոգման։
Գնորդը կատարելու է գույքի ձևակերպման և գրանցման հետ կապված ծախսերը։
Աճուրդում հաղթող է համարվում առավել գին առաջարկող մասնակիցը։
Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝ ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճեն, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ նրանց պետական գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները։
Աճուրդի մասնակցության վճարի և նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթերը, որոնք պետք է կազմեն համապատասխանաբար լոտի

մեկնարկային գնի 1 և 5 տոկոսները, պետք է վճարվեն «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի Չարենցավանի մասնաճյուղում բացված թիվ 16028027192725 սնանկության հատուկ հաշվին, աճուրդի անցկացման օրվան նախորդող 5 օրվա ընթացքում՝ ընդհուպ մինչև աճուրդին նախորդող օրը ժամը 16:00 և ներկայացվեն ՀՀ սնանկության դատարան /ք. Երևան, Օտյան 53/2 /:
Լոտերը կարելի է ուսումնասիրել սույն հայտարարության հրապարակման օրվանից աշխատանքային օրերին և ժամերին՝ նախապես պայմանավորվելով կառավարիչի հետ: Մանրամասներին ծանոթանալու համար դիմել սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանին (հեռ. (091) 40-19-22):

37494401922

avagyan.gevorg@yandex.ru

ՀՀ, ք.Երևան, Դավթաշեն, Տիգրան Պետրոսյան 21